

ՁԻՄԱՆՈՐԻՒՄԻ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պոչտային համար	12 Ֆր
Տարեկան	6 "
Հեղատեսակ	15 "
Մասնատեսակ	8 "
Մանկական համար	3 " 50
Տարեկան	1.50 "

Մանկական տար անոթի կտրուկ համար 40 ս. իսկ յերթին երեսի համար 20 սանթիմ կ. երեքին անգամ անգլիական համար 20 0/0 գեղջ կըլ լայ՝ վառանջի համար ձեռք 40 սանթիմ

ՇԱՐՇՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՎԱԿՈՒԹՅԱՆ ԶՈՐԲԵՇԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ գրամ զրկի հետագրութիւնն հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoun" Varna (Bulgarie)

Արաստեսիանի համար ձեռք

՝ (20 ՍԵՆՏԵՄԲԵՐ)

Պոչտային համար ձեռք

՝ (15 ՕԱԿՏՈՒԲ)

Գրութիւնք եւ չեւ տրուի

ՇԱՐՇՈՒՄ Ի ԲԱՎՆԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԿԻՎ ՎՃԱՐԷ

ՊԱԿԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. Դաշնակցական խումբ կրնայ կազմել այն անհատը որ սկզբունքով յեղափոխական է, եւ կը հետեւի Դաշնակցութեան ուղղութեան, սակայն պարտաւոր է նախապէս կօմիտէին հազարգելով անդամներուն անունները անոր հաւանութիւնն ըստանալ խմբի կազմութեան մասին:
2. Խումբը կը բաղկանայ 5-10 անձերէ, որոնք ուրիշ խումբերուն չեն կրնար մասնակցել:
3. Խումբի մէջ նոր ընկեր կըն դուռուի մեծ մասին հաւանութեամբը, լսելով հակառակորդին բերած պատճառները. եթէ ո եւ է անհամաձայնութիւն ծագի այս մասին ընկերներու մէջ պէտք չէ նոր ընկերներ ընդունել:
4. Խումբին անդամները պարտաւոր են անդամավճար ընել ինքնաբերաբար:
5. Խմբապետը պարտի ամէն ա միս գանձել անդամավճարները եւ յանձնել կօմիտէին:
6. Երեք ամիս շարունակ չը վճարող անդամը կը հրաժարեցուցուի, բացառութիւն կըլլայ միայն այն պարագային երբ անդամներէն մին նիւթապէս անկարող է:
7. Խմբապետը միանգամայն գանձապահ է:
8. Խմբապետին պաշտօնն է հսկել խումբին կանոնաւոր ընթացքին վերայ, յարաբերութիւն պահել կօմիտէի հետ, կօմիտէին տուած տեղեկութիւնները խմբին հաղորդել, եւ խմբին տեղեկագիրը կօմիտէին յանձնել. Դաշնակցութեան ծրագիրը պարզել նորիկ անդամին, արձանագրել անդամներուն անունները, նշանակել անդամները, վճարող անդամին ներկայութեանը, հաշիւ բռնել. ամսը անգամ մը հաշիւ ներկայացնել խմբին եւ ստորագրել կօմիտէին ներկայացնելու համար. այս վերջինն ընդունած ընկալագիրը ներկայացնելու համար: Այս վերջինն ընդունած ընկալագիրը ներկայացնելու անդամներուն եւ իր յովը պահել:
10. Ամեն անգամ իրաւունք ունի գրաւոր կերպով խմբապետին դիմել եթէ կարեւոր առաջարկներ ունի:
11. Խումբին ներքին գործերուն համար անհրաժեշտ է (") գաղտնապահութիւն. Այս յօդուածից պարզ հասկացում է որ կօմիտէի եւ կեդրոնական կօմիտէի ներքին գործերի մասին գործը լսուելը բացարձակապէս օճիր է, որովհետեւ նրանք աւելի մեծ գաղտնիքներ ունին:

հուլիսնը: 12. Եթէ խումբը ձեռնարկութիւն մը ուզէ ընել իր խմբական գործունէութեանն զուրս պէտք է կօմիտէին դիմէ եւ անոր հաւանութիւնը ստնէ:

Դրանք վտխադրուիք
Ընդհանուր ժողովը 24րդ. որոշման համեմատ որոշուեցաւ դրամի փոխադրութեան համար յանձնարարել Պալք. շրջանի կօմիտէներուն որ երեք ամիսը մէկ անգամ իրենց դրամը զրկեն Պալքանեան կեդրոնական կօմիտէին, իսկ հաշիւները թէ Պիւրոյին եւ թէ Պալք. կեդր. կօմիտէին: Մինչեւ հիմա զանց առնող մարմինները պարտաւոր են անյապաղ իրենց հաշիւներն ու դրամները զրկել Պալքանեան կեդրոնական կօմիտէին:

Պատգամաւորական ժողովը
Ապագայ կեդրոնական կօմիտէի միջավայր որոշեց Ք. քաղաքը, ուր պիտի կեդրոնանան հաշիւները ու դրամական յարաբերութիւնները:

Վերոյիշեալ կանոնները որոշում են դաշնակցական անհատի խմբերի պարտականութիւնն եւ դերը, զէպի Դաշնակցական կազմակերպութիւնը բաղբանեան շրջանում եւ եթէ դաշնակցական ուղղութեան համակրողները կամ անդամների մէջ անհասկացողութիւն, կազմակերպութիւնը անիշխանութեան հասցնելու շարքի, տիրում է. դրա պատճառը կօմիտէները, նշանակված շրջանի գործիչները եւ շրջանական կամ ընդհանուր ժողովին մասնակցող պատգամաւորները են, որոնք կամ ընդունակութիւնը չունեն ըմբռնելու իրենց պարտականութիւնները զէպի կազմակերպութեան պատկանող պարզ անդամները եւ մարմինները, կամ թէ կազմակերպութեան մէջ պաշտօն որոնում են միայն պաշտօնի համար, եւ ոչ թէ հօգուր ունենալով կազմակերպութիւնը զօրացնել եւ յեղափոխական դադափաբը առաջ տանել:

Այս բոլորից յետոյ կարելի է եզրակացնել որ այն դաշնակցական անհատը, խումբը, կօմիտէն եւ առհասարակ ամէն մի մարմին

երբ չէ կատարում իր պարտականութիւնները զէպի կազմակերպութիւնը, ուրեմն նա եւ զրկվում է իրեն համար գծված իրաւունքներից: Այդ սկզբունքներով կեկավարվելով, Դաշնակցութեան ընդհանուր ժողովը, նազագոյն պահանջներ է դրել դաշնակցական անհատի, խմբի, կօմիտէների, կեդրոնական կօմիտէների, բիւրօների եւ պատասխանատու մարմինների համար, եւ եթէ այդ ամէնը բաւարարութիւն չը տան նազագոյն պահանջին, դաշնակցական անհատը կազմակերպված դաշնակցական շի համարվի, խումբը իրաւունք չի ունենայ կօմիտէի հետ յարաբերութիւն ունենալ, կօմիտէն չէ կարող եւ կօմիտէի հանդէպ իրաւունքներով օժտված կօմիտէ ներկայանալ, իսկ կ. կօմիտէները, պատասխանատու մարմինները եւ բիւրօները չեն կարող ձայն ունենալ Դաշնակցութեան ընդհանուր ժողովի մէջ: Սա այնպիսի մի ճշմարտութիւն է որին հակառակողը կամ ապուշ պէտք է լինի կամ ինտրիզան ու ստորին տիպ, որի օճիքից պէտք է բռնել եւ զուրս նետել կազմակերպութեան շարքերից: Մենք կրկնում ենք, կազմակերպութեան պարզ անդամները եւ կամ թէ սոսկ համակրողները մեզաւոր չեն եթէ զոհ են գնում զանազան ստորին տիպերի, այլ ձեռնահաս մարմինները եւ իրաւունքներով օժտված գործիչները, որոնց գլխաւոր պարտականութիւնն է կազմակերպական ամբօխին մարտեցնել տալ կազմակերպութեան օրէնքները, պարզել անդամների եւ մարմինների իրաւունքները ու պարտականութեանները, ու մեր անդրդվելի համոզումով, այդպիսով աւելի մեծ պորձ կատարված կըլինի, քան թէ տհաւյին ճառերով ու սղգասիրական յօդուածներով: Ծանոթացնել չը ենթարկվող, օրէնքները չը յարգող կամ օրէնքին անմասնօթ մարդից ճառով միայն մի քանի սանդիմ կարելի

է ստանալ յեղափոխական կազմակերպութեան համար, բայց չէ կարելի ստեղծել պարտականութիւնները ըմբռնող եւ իր իրաւունքների սահմանը գիտակցող անդամներից կազմված կուսակցութիւն: Իսկ եթէ մի յեղափոխական կուսակցութիւն զուրկ է այդ հիմքերից եւ իր անդամների յարաբերութիւնների մէջ պահանջվելիք առնական շիտակութիւնից, նրա գրութիւնը շատ խախտու կը լինի եւ նրան անկումից չեն կարող փրկել նոյնիսկ բեռութեան ամենափայլուն յաջող նշանները:

ՎԱՐԴՕ
ՍԱՍՈՒՆԻ ԿՈՒՒՆԵՐՈՒՆ ԱՌԻՅՈՎ
ԺԴ.

Հիացո՛ւմ քե հայնոյանք
«Եթէ յաղթուինք եւ Սասուն ոչնչանայ, թող ուրիշներ լուծեն մեր վրէժը...»
Մահու եւ կեանքի կոնքերուն մէջ, ուր վահանները կը մղուէին հայրենիքի փրկութեան իտեպէն եւ տառապանքներու ու արեւներու «վրէժ»ի զհացումէն — «իրենց գործը շարունակելու» եւ «վրէժին լուծելու» կրտակն է որ կը զրկեն միայն իրենց հետաւոր եղբայրներուն:
Եւ որքան ալ ծանօթ ըլլային անոնք արտասահմանի ազգապաշտպանութեան, սաղաքանքներուն, «ամբօխային տրամադրութիւններուն», բնականօրէն միայն իրենց ուշադրութիւնը պիտի կեդրոնանար «իրենց գործին» եւ «իրենց վրէժ»ին վրայ:
Եթէ վայրկեան մը մտածէին կամ գիտնային որ, իրենց անունը, իրենց գործն ու անձնութիւնը ինչ տեսակ պիտի գնահատուի նորէն — տասը տարուան դասերէն չետքը — եթէ մտածէին որ, յեղափոխութեան թշնամիները, խախտու հողը վրայ կեցած՝ ճղակտոր կըլլան զգուշիտութեամբ, դաւանանքաւորութեամբ, «քննադատութեան», անկեղծութեան» եւ «հայրենասիրութեան» քօղով ալ դարգաբերու, աւելի ապահով հասնելու համար ոճրագործութեան կայանը, եթէ մտածէին վայրկեան մը, կըսեմ, երկրի կուռըները ատ ազգապաշտպաններուն վրայ,

Թերեւս սիրակ մըն ալ ատ վատե-
րուն համար ձգէին...

Չգնեք սակայն որ երկրի կուողը
իր արհամարանքի և համբերութեան
միջեւ հիմակուան պատկանելիքը

Բայց մենք պարտաւոր ենք ամեն
տեղ և ամեն պարագայի մէջ ատ վա-
տերու դիմակը վար առնել, ցոյց
տալ իրենց իսկական գոյներով, ու-

րովհետեւ անոնց «ազգասպան ազմուկ-
ները» եթէ դատաւարաւորաւ է երկրի
սահմաններէն միշտ դուրս արտաքս-
ուելու, հոս, արտասահմանի մէջ,
որոշ չափով իր վնասակարութիւնը
ուշի ի հարկէ:

Ինչ է սակայն ատ վատերուն ըսել
ուզածը, ինչ է հիմերինն որուն վր-
բայ կ'աշխատին բարձրացնել «հակա-
յեղափոխական վայնասունները», ինչ
կուզէին որ ըլլար. մենք գետ չի կը-

ցանք բան մը հասկնալ:

Ատ մարդիկը ուրիշ բան չի կըցան
գուրս տալ իրենց բերաններէն բացի
ցեխերու և հայտնանքներու զէզերէն...

Յեղափոխական հրաւիրեց թուր-
քը, որ եկաւ Սասունը կոտորեց ը-
սել կուզեն:

Բայց չէ՞ որ վերջին ութ տարուան
իրականութիւնները գիտենք մենք և
ամփոփնցինք անոնք, որուն առջեւ
այլեւս պայմանի կը մայ Սուլթանի
արժանի գաւակներուն, Չէ՞ որ սկսած
հայ կղերէն մինչեւ Սասունցի կիր
եկան իրենց կեանքի իրական օրի-
նակներով ու բողոքներով պատակել
ատ ցեցերը, Չէ՞ որ ծրագրուած այս
աղէտը գործադրելու ետեւէ էր թըշ-
նամին:

Ինչ է ուզածնին:

Կուզէին որ թուրքը երթար Սա-
սունը բնաջինջ ընելու և Սասունցիին
կամ հոն գտնուող յեղափոխականները
թեւերնին կապէին, զէնքերնին նե-
տէին և թշնամին ոտքը իյնալով
«թէսլի մէջէնտիմ» ըսէին, Ասանկ
կուզէին:

Եթէ ատ էր ուզածնին, ատի յե-
ղափոխականներէն գուրս, սարուկ-
ներու ու վատերը իրենց մէջ թող փնտ-
ռեն:

Թերեւս կ'ուզէին որ Սասունցի ժո-
ղովուրդը ազատաւէր չըլլար. յեղա-
փոխական ոգի չունենալ, և կամ
հոն յեղափոխականներ չըլլալն ըր-
նալ:

Բայց ատոր պատճառը թող հարց-
նեն մեր ցեցերը նախ իրենց տիրոջը,
Սուլթանին, որուն փաստարանու-
թիւնն են ստանձնել արդ միջոցաւ
Իսկ յեղափոխականը, որ իր կեանքը
գրեւր է ժողովուրդին համար, բնա-
կանաբար պիտի ըլլայ հոն՝ ուր զէնք
կը սիրեն, զէնք կը կանչեն ու իր
գործունէութեան կը յարձարի. Յե-
ղափոխականը հոս չըլլայ, հոն չըլ-
լայ, հոս չապրի, հոն չապրի, ուր
պիտի մնայ, օգրին մէջ: Եւ յետոյ,
չէ՞ որ նոյնիսկ «յեղափոխական բե-
րանովներ» քարոզած և իրենցէն բնաւ
չաշխատուած «բնդհ», ապտամբու-
թիւնն ալ մարդով և փրփոխականա-
տով կըլլայ, ինչ երեսով ուրիշն կը
զատափետնի յեղափոխականը:

Եթէ «Կաշակցականները թուրքին
աչքը բացած ըլլալու» իրենց ճշմոյցն
է որ մատերնին փաթթոց ըրած են և
իրենց հիմ բռնած ըլլալ կը կարծեն,
չատ ծիծաղելի են Որովհետեւ աչքի
առջեւ է պատմական իրողութիւնները
և յեղափոխութեան վառարաններուն
և բանապետութիւններուն փոխադարձ

դերն ու յարաբերութիւնները որուն
մասին խօսած եմ առաջուց:

Չըլլա՞յ որ արտասահմանի այս կամ
այն քաղաքին մէկ անկիւնը, լսա-
բարներէն մէկ քանիին մէջ գաշ-
նակցականները իրր թէ՛ «Սասունի
մէջ մարդ ունինք, զէնք ունինք»
ըսած ըլլալու պարագան է որ իրենց
այդքան սիրտ կուտայ և կամ այդ-
լուրերն է որ նոյն ատ վատերը տա-
րեր հասցուցեր են թուրքին ականջը:

Ո՞ր էին սակայն, ականջին
բամպակ թխած էին, սրտերնին
քա՞ր կարած էր երկրի ժողովուրդին
ա՛յնքան սրտաշարժ կոչուրու առջեւ,
երբ հայաստանցին իր ամբողջ թո-
քերով կը պոսար-աղէնք կուզէնք
և ասի ոչ թէ լսարաններու, այլ
թերթներու մէջ, ո՛չ թէ մէկ կամ
երկու անգամ՝ այլ ասոր տարուան
մէջ անդադար, ինչու՞ պայանձած
էին, երբ Հրապարակը կուրի մէջէն
Իսկ ասի զէնք, վա՛խ զէնք» կա-
ղաղակէին:

Եւ եթէ թուրքին գիտցածներն ու
հրապարակով յայտնածները հայուն
ըսելը մասնութիւնն է ատ վատերու
տղատ Երեւակայութեան մէջ, որ-
քան զրական և գործնական մատ-
նութիւն է ուրիշն այդ անպիտան-
ներուն ըրածը երբ 8-10 տարի է ի-
վեր յեղափոխութեան և երկրի ժո-
ղովուրդին անունով ժողովուրդու
բարձրէն անոր ձեռք զէնք մը չի
տալ և ուտելէ դատ, ելած են յեղա-
փոխութիւնը ծաղրելու և զայն ներ-
կայացնելու իրեն ոչնչութիւն, երբ
թշնամին անոր բաւական եր-
կուղով կը նայի:

Ու երբ մարդիկ, որոնք իրենց
կեանքի ընթացքին մէջ յեղափոխու-
թիւնը ու ժողովուրդու համար ունէ
գործ չը տեսնելէ զատ, ընդհակա-
ռակ քանդելու աշխատած են իրենց
սեւ հոգիի ամբողջ ուժովը, ուրիշն
իրենց ըրած ո՞ր աշխատութիւննե-
րուն չարաչար գործածուելու՝ առ-
թիւ գիզած մաղձերնին է որ կը թա-
փեն այդքան գարշելի կերպով:

Ու երբ անքին կուողները յեղա-
փոխութեան հաւատարիմ մնացող և
գործող կազմակերպութեան—Կաշակ-
ցութեան տուած միջոցներովը—ստի-
պուեր են անձերնին, պատե-
նին պահելու համար կուրիլ և՛
գիւցազնօրէն կուրիլ, ու միեւնոյն
ատեն փրկութեան ճամբան հարթել,
փոխանակ հիացումի արժանանալու,
հայտնանքն ու անէ՞ծքն է որ բաժին
կը հանեն մեր վատերն ու սարկա-
միտները:

Հիացումը թէ հայտնանքի արժա-
նի են Սասունցի կուողները, որոնք
իրենց և հայ ազգին պատելը ոտ-
նակի չընելու համար չեն ուզեր
վզերնին ձուլուլ, բռնարարութիւն
կըցածնուն չափ զէնք են գրեւր:

Հիացումը թէ հայտնանքի արժա-
նի է Սասունցին երբ անոր մէջ ա-
պետականութիւնը ա՛յնքան մեծ է
որ, չէ ուզած իր տունն ու տեղը
թուրքին այրել ապա ու ինք իր ձեռ-
քովը կայրէ: Եւ մեր հայ թիզաները
մե՛ծ յանցանք մը ըսնաւ ըլլալու գո-
հունակութեամբ, համբակական ժպի-
տը երեսնին, ատի տեսակ մը փաստ
ծառայեցնելու համար կուրիլն ստու-
գել... Երբ հատիկ հատիկ, անուն-
ներով գրուածները կոյր կողմերուն
հանդիպեր է...

Հիացումը թէ հայտնանքի արժա-
նի է Սասունցին, երբ ան կրնայ,
չարք մը փառաւոր յաղթութիւննե-
րէ ետք, քսան հազար կանոնաւոր

զօրքերու և պոչիպոչուք խուժանին
յարձակութեան և 1000է աւելի
իւղանոթներու հարուածներուն զէնք
զնիլ օրերով:

Հիացումը թէ հայտնանքի արժա-
նի է Սասունցին և յեղափոխականը,
երբ այնքան զօրքերով շրջապատ-
ուած ատենն իսկ կուրիլ և կրակին
մէջէն, պատերազմող բանակի մը կա-
նանգակ կը հանէ իր յոյզերն ու ցա-
ւերը, յաղթութիւններն ու պարտու-
թիւնները իմացնելու մեզի:

Եւ 30000 թշնամիներու զէնք Սա-
սունցիէն մե՛ծ մեծ բաներ սպասող
ու պահանջող մեր «Պաշտատի ծոյ-
չերն» ու սլաքները, շարտիտ
ներն ու նենգամիտները՝ գոնէ մէկ
անգամ չեն երեւակայեր Սասունի
մէջը, բուք-բորանը իր ամբողջ
ջլատիչ կողմերովը, որուն ճիրաննե-
րուն մէջ էր կուող Սասունցին,
մինչդեռ նոյն ատ պահանջողները
հանգիստ վիճակներն մէջն անգամ
վայրկեան մը չեն հեռանար կրակէն
և կը պլուրին փայլօները, ևս բուք
բորանին Սասունցին կը կուրիլ, թու-
րքին և... անօթութեան հետ:

Եթէ ձեռք չի վերցած թշնամու-
թիւնները և կուրի սկսի կը գրէ
Վահան մարտ ճիւղ—բաւական դժուար
կըլլայ մեր գործը, իսկ եթէ խաղա-
ղութեամբ հասնինք մինչեւ մայիս
այն ատեն, ինչպէս կըսեն, Ասա-
նուած ողորմած է...

Աս քանի մը տողերը կը բաւեն
ցոյց տալու համար թէ՛ որքան վը-
տանգաւոր թշնամի մըն է ձեռք յե-
ղափոխականին համար Սասունի մէջ,
Եւ աս գծուարութիւններն ու
վտանգները զգացող Հրայրներն ու
Վահաններն են որ կը մեղադրուին
հետու նստող և շարժող-բողոք վա-
տերու կողմէ Սասունի արհաւիր-
ներուն պատճառը՝ յեղափոխական-
ները ցոյց տալուն մէջ:

Սասունցիէն մե՛ծ բան ակնկալող-
ները և անոր պարտութիւնը Յեղա-
փոխութեան զէնք իրեն զէնք գործա-
ծել ճշմոյցները, գոնէ խի՞զն ալ
չեն ընէր երկու կազմակերպուած
հզոր սէրութիւններու մղած ճակա-
տամարտները աչքը առջեւ բերիլու
և բաղադրութեան զննելու...

Եւ սա խախտու հիմերուն վրայ
կրթներով է որ այդքան զգուշի
արշաւանք մըն են սկսեր յեղափո-
խութեան զէնք Սուլթանի հաւատա-
րիմ հայ-ցեցերը, քննադատութեան
անունով:

Տեսնե՛ք սակայն ինչ է ատ սուլ-
թանական պատճառարանութիւննե-
րուն տեսակէտը և արժեքը:

Ժիրայր
Ֆիլիպէ

Անդիլիան ԳՈՒՆԵՐԸ ԿԸ ՇՅԵ
—(100)—

Ուսու ձաբոնական պատերազմը
Անդլիոյ համար նպաստաւոր պայ-
մաններ ստեղծեց Հնդկաստանը
ապահովելու և բոլոր այն
կէտերուն մէջ ամուր ու հաստա-
տուն կացութիւն մը ստեղծել,
ուրիշ Ռուսիան հաւանականօրէն
պիտի ուզենար ներս խուժիլ
անգլիական կայուածիքը:

Ձաբոնական պատերազմը սկը-
սելուն պէս անգլիական կառա-
վարութիւնը արշաւախուժ մը
զրկեց թիբեթ, մայրաքաղաքը

մտաւ. Գոյալլաման, որ Ռուսիոյ
բարեկամն էր՝ փախուց, իրեն
շահբուն մեծապէս նպաստող
զաշխիք կապեց:

Պարսկաստանի մէջ ալ, ուր
Անդլիա և Ռուսիա շարունակ կը
մրցէին, և Ռուսը մեծ յոյսեր ու-
նէր գոնէ Պարսից ծոցը հասնիլ:
Անդլիա ճիգեր թափեց խուժու-
թիւններ ստեղծելու, որպէս զի
ինք զէնքով միջամտէ խաղա-
ղութիւնը վերահաստատելու և
այդ կողմէն ալ Ռուսիոյ առջեւ
կարելու:

Եւ այսօր Անդլիան իր նպա-
տակին գրեթէ ամբողջովին հա-
սած կը համարուի: Իսկ Ռուսիոյ
մեծ ծրագիրը, երբ եւրոպէս Հնդ-
կաստանի տէրը դառն լ, եթէ
ոչ յաւիտենապէս գոնէ շատ եր,
կար ժամանակի մը համար ջուրը
կրնայ:

Պատերազմէն յետոյ, նոյն իսկ
եթէ Ռուսիա վե՛ր իջի՞ր՝ յաղ-
թան... կը տանէ, տասնեակ տա-
րիներ պէտք են այնչափ կազ-
մուրուելու որ ան կ'սրբնայ Անդ-
լիոյ պէս ճարտիկ ու զօրեղ պե-
տութեան մը զէնք, իր քաղաքա-
կան ծրագրերի մը իրականացնե-
լու համար, ուղղու լեզուով մը պա-
հանջներ գնել:

Աւ մենք կը կարծենք թէ Ռու-
սիոյ գիւտանգէտներուն ցոյցն ու
զարտը այնքան ձաբոնացոյց
զէնքն է, որ չափ Անդլիոյ, և հո-
մոզուած ըլլալով թէ որ չափ պա-
տերազմը երկար տեւէ, այնչափ
իրենք պիտի սեղմուին Անդլիա-
յէ, ստոր համար սկսած են ոչ
միայն ձաբոնի հետ հաշտուելու
մասին խօսիլ, այլև յարձակո-
ղական և պաշտպանողական դա-
շինք մը կ'սպիւրու առաջարկու-
թիւններ ալ կըլլան ուսու մամու-
լին մէջ:

ԽԻՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ
ԹԷ ՍԻՍԱՆԿՈՒՆԻԿ
(Մեր Մասնաւոր Թղթակցէն)
15 Օգոստոս

Շատերին յայտնի փաստ է, որ
Ռուսաստանը ամէն կերպ աշխատում
է ցոյց տալ, որ ինքն էլ սերտպա-
կան պետութիւն է, որ ինքն էլ
հայկա՞ր զէնքով մղուած յարգելի մա-
մուլի նշանակութիւնը, խօսքի ու հա-
մոզմունքի ազատութիւնը:

Սակայն նրա այդ կեղծ ձգտումը
չատ անգամ այնպիսի խայտառակ հե-
տեւանքներ է ունենում, որ նոյնիսկ
թիբեթիայի նման բարբարոս կասա-
վարութեան անգամ կարող են ամառ
չեցնել, Անա մի թարմ ապացոյց:

— Հեռաւոր Անդլիայից երկու թղ-
թակիցներ, յայտնի «Տէլլի Գրքոսի-
քը» թերթի երկու աշխատակիցներ
ճանապարհ են ընկնում զէնքի կողմ
կաս, որպէս զի մօտիկից ծանօթա-
նան տեղական կեանքի հետ, ու-
սու մնասիրեն պարբերաբար կրկնող
ժողովրդական խլրտումներն ու զըժ-
տութիւններն պատճառներն ու գոր-

ծող տարբերք: Պարզ է ի հարկէ, որ այդ խնդրում «Հայկական շաքար»-ը...

Սով է յանցուոր. արդեօք յանուն արդարութեան ընդհանր հայր, թէ...

Կովկասի մայրաքաղաքը — թիֆլիզ օտը կոխելուն պէս նրանք պաշտօնական...

Սով է ունենում սիրալիր ընդունելու թիւն չափազանց քաղաքավարի դարձածներով...

Սովորական հարց. — փորձից յետոյ սխուժմէ կատակերգութեան նախաբանը:

Սով է կրտսէ արդեօք հարցնելու, ասում է թղթակիցը. թէ ի՞նչ նպատակով...

Սով է հարկէ բարի նպատակով պատասխանում է Ֆրեզեն, մենք ուզում էինք միայն հսկել...

Սով է գուր սխալում էք, իւրաքանչիւր կատարութիւն պէտք է իմանայ թէ ի՞նչ է կատարում իր երկրում...

Սով է ինչու ինչու, թէ այդպէս է սակայն միթէ՞ հսկիլ կը նշանակէ սեփականացնել:

Սով է մասին զեռ վաղաժամ է խօսելը: — Իսկ ի՞նչով բացատրել այն խըստութիւնները...

Սով է ինչու ինչու... զրանք իբր սովորութիւններ չէին, այլ արդար հաստատուած ըմբոստ հպատակներին:

Սով է հարկէ, կը ցանկոյթ, որ ձեր այդ խօսքերը մամուլի էջերում արձանագրուեն:

տեղի կունենայ, քանի որ այդ է մեր ճամբորդութեան կէտ նպատակը...

— Այո՛, այո՛. կարող էք գրել. ուս կառավարութիւնը չէ վախենում մամուլի կարծիքէն:

Թղթակիցները բաւական սրտով հրաժեշտ են տալիս եւ մեկնում, նախապէս յայտնելով, որ մտադիր են գնալ Սրբաւանեան նահանգը:

— Շատ լաւ, ասում է Ֆրեզեն, ես կարգադրութիւն կանխմ, որ ձեզ ամէն կերպ աջակցեն:

Գնում են թղթակիցները, բայց աւա՛ղ. աջակցութեան փոխարէն մի միայն հաւանական էր երկրորդում: Հազիւ էջ միայն հասած նրանք նորից երեսան են վերադառնում մոռացած իրերը վերցնելու:

— Բարձրից այդպէս է կարգադրած, ասում են տեղական իշխանութիւնները:

Բայց այդ զեռ բոլորը չէ, թղթակիցներին հէնց նոյն օրը վազին են նստեցնում եւ ժամտարմենքի ուղեկցութեամբ ճանապարհ դնում թիֆլիզ:

Եւ դա մեզանում կոչում է յարգանք զէպի մամուլը, համակրութիւն զէպի խօսքի ու մտքի ազատութիւնը:

Յուշաբեկ թղթակիցները զեռ այս տեղ են՝ շարունակ ենթակայ գաղտնի ու յայտնի հսկողութեան:

«Հայրենիք»

«ՍԻՍԱԿԵՆ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՇՎԵԿՆԻՐՈՒՆԵՐԸ

Պարոն Սիրաք Մարգարեանի շնորհիւ հաշվեկշիռները հետեւեալներն են: Հանգուցեալ Սիսակեան ընկերութեան գործադիր վարչութեան հաշվեկշիռի մէջ ընկերութիւնը ունի պատրաստի դրամ 1098 ֆր. 85 սնթ. գանձուելիք 224 ֆր. 30 սնթ.:

Թողնելով գործադիր ժողովին և հաշվեքննիչ յանձնախմբին կանոնադր տեղադրելով պարզելու հաշիւները այս սարքերով թիւնը, որը կարող է իր իրաւացի պատճառները ունենալ, մենք հետեւեալը կը պարզենք հասարակութեան առջեւ:

1894 թւականի սեպտեմբերին Սիսակեան ընկերութեան գործադիր վարչութեան տրամադրութեան տակ գտնվելէ պատրաստի դրամ 1545 ֆր. 50 սնթ.:

ձապահար Մ. Զգոնեան (Մարութ Զգոնեան ինչպէս ասում են):

Հաշվեկշիռի տակ ստորագրել է եւն. Պէլլիկեան, Փ. Կատեհապիւր: Հիմա այդ պարունակին մնում պարզել թէ ի՞նչ եղաւ այդ զբաղմբ, իսկ քննիչ յանձնաժողովին էլ մնում է պարզել երկու հաշվեկշիռների մէջ եղած տարբերութեան պատճառները:

Լուծութիւնը այդ պարունակի կողմից մենք կընդունինք իբր համաձայնութեան նշան որ Սիսակեան ընկերութեան գործադիր վարչութիւնը ի շարին է գործ գրել ընկերութեան անդամների վստահութիւնը, իսկ հաշվեկշիռի յանձնախումբն էլ աչք է գոցել, շուրջով ընդհանուր ժողովի դիւտանին գրաւոր բացատրութիւն տալ:

Ինչպէս պարզում է այդ յանձնախմբի մուծ նամակը ուղղված ընդհանուր ժողովի դիւտանին:

Սեզ զարմացնում է գործադիր վարչութեան և քննիչ յանձնաժողովի սփիւքսան լուծութիւնը: Նրանք պարտաւոր են խօսիլ, որպէս զի Փիլիպոս Հալաճեանը, մանաւանդ որ հիմա հողաբարձութեան տաննապետ է, մի խոշոր բլրածէ ունեցող վարչութեան ատենապետ, մաքրվի, արդարանայ, կամ թէ պարզվի որ այդ տեսակ մարդին չէ կարելի թողնել այն տեսակ մարմինների մէջ, որի տրամադրութեան տակ ազգային դրամներ կան:

Ինքը Փիլիպոս Հալաճեանն էլ պէտք է խօսի. մանաւանդ որ շատ էր սիրում աջ ու ձախ այսինչին կամ այնինչին ազգային դրամ ուտող հոշակել իր շօրպաճի մաքրանքը ծախած կամ տարածած միջոցին:

Խօսիլ պարունակ, խօսիլ պէտք է. լուծութիւնը ձեզ համար շատ ծանր և սպանիչ հետեւանք պէտք է ունենայ. բոլորիդ համար ովքեր մտնեցէլ էք այդ դրամներին:

Սուսիլ պարունակ, խօսիլ պէտք է. լուծութիւնը ձեզ համար շատ ծանր և սպանիչ հետեւանք պէտք է ունենայ. բոլորիդ համար ովքեր մտնեցէլ էք այդ դրամներին:

Սուսիլ պարունակ, խօսիլ պէտք է. լուծութիւնը ձեզ համար շատ ծանր և սպանիչ հետեւանք պէտք է ունենայ. բոլորիդ համար ովքեր մտնեցէլ էք այդ դրամներին:

Սուսիլ պարունակ, խօսիլ պէտք է. լուծութիւնը ձեզ համար շատ ծանր և սպանիչ հետեւանք պէտք է ունենայ. բոլորիդ համար ովքեր մտնեցէլ էք այդ դրամներին:

Սուսիլ պարունակ, խօսիլ պէտք է. լուծութիւնը ձեզ համար շատ ծանր և սպանիչ հետեւանք պէտք է ունենայ. բոլորիդ համար ովքեր մտնեցէլ էք այդ դրամներին:

Սուսիլ պարունակ, խօսիլ պէտք է. լուծութիւնը ձեզ համար շատ ծանր և սպանիչ հետեւանք պէտք է ունենայ. բոլորիդ համար ովքեր մտնեցէլ էք այդ դրամներին:

Սուսիլ պարունակ, խօսիլ պէտք է. լուծութիւնը ձեզ համար շատ ծանր և սպանիչ հետեւանք պէտք է ունենայ. բոլորիդ համար ովքեր մտնեցէլ էք այդ դրամներին:

ինձ ուղղելու գործադիր ժողովի ատենապետին՝ վառնդի խնդիրը նիւթ մատակարարող գումարն անոր ստորագրութիւնը կը կրէ:

Հետեւաբար եղած հարցումներուն ալ անաբար պատասխանելէ պէտք չէ որ խուսափի կամ խրաչի, ի հարկէ լրագրիչներու մէջ երեւցած հարցերուն պատասխանել հաշուեքննիչ յանձնախումբին կողմէ կնքուած գուրը ջախջախելու չափ գրելին չէ, որովհետեւ առաջինին մէջ միտք կը պահանջուի, իսկ երկրորդին՝ կոչու ու բիրտ ուժ:

Վարչութիւնս հանրային շահերուն հանդէպ յանձն առած պարտականութիւնը լիովին կատարած եւ կարելին ի գործ դրած է արդէն. եթէ հանրային վստահութիւնը ո՛ր եւ է պարագայի մէջ զէպի շայն գործածած՝ իր պարտականութիւններուն մէջ թերացում մը ունեցած է. ձեր ի ձեռն ունեցած փաստերն ամենակարեւորն ու ջանջախիչը կրնաք հրապարակ բերել, եւ խոստանալի ծնունդ ունեցող ընկերութեան մահազգը գրողներուն հանդէպ խմբագրական իրաւունքները ի գործ դնել:

Նախապէս վարչութիւնս ի նկատի առնելով գործադիր ժողովի Ատենապետին ինչ-որ թաքուած էջերը, պարտաւորեցաւ հրաժարիլ հաշուեքննիչ յանձնախումբին 1895 մարտ 27 թուականի իր նամակն ստանալէ վերջ. իրերու այս տխուր ու միանգամայն ողբալի գրութիւնը պաշտօնապէս ալ հաղորդուեցաւ նոյն ժամանակուան վարժարաններու Հողաբարձութեան որ կարեւոր տնօրինութիւն մը ընէ այս մասին:

Արդ, Տէր խմբագիր, ո՞ր օրէնքով, եւ ի՞նչ փաստերով վրայ յենլով կը մեղադրէք զիս. ուստի կը փափաքիմ իբրեւ հրաժարեալ ատենապետ հասկնալ:

Նաեւ ներկայիս հետ ներքակ պիտի ընդունիք վերոյիշեալ նամակն զոր յղած էր հաշուեքննիչ յանձնախումբն, կը սիրեմ յուսալ որ նոյն մարմինն ալ պիտի բարեհաճի իր բարանցի բացատրութիւնները գրաւորի փոխանակելու:

Ուստի կը խնդրեմ որ հաշուեքննիչ յանձնախումբին նամակն ալ իմինիս հետ միեւնոյն օրը հրատարակելու շնորհ ընէք:

Սիրաք Մարգարեան 10 Սեպտ. 1904 Վառնա

Առ Պատ. Դիւան Ընդհ. Ժողովոյ Սիսակեան ընկերութեան Վառնայի

Սիսակեան ընկերութեան Գործադիր ժողովոյ գործառնութիւններն վերաքննող հաշուեքննիչ Յանձնաժողովս արտած լինելով իւր պաշտօնն, ներկայիս ներքակ կը յղէ Դիւանիդ իւր պատրաստած հաշուեկշիռն:

Յանձնաժողովս զիտէ թէ հաշուեքննութիւնն յապաղեցաւ, որպէս զիտողութիւն ըրած էր Դիւանիդ իւր Մարտ 23 թուականի նամակուն, այլ սոյն յապաղման պատճառներն, քաջ իսկ տեղեակ է Դիւանդ թէ Յանձնաժողովոյս անդամոց կամքէն անկախ պարագայներէ յառաջ եկած են. յապաղմունք որոց պատճառներն կարեւորութեանէ բոլորովին զուրկ նկատուով աւելորդ կը համարեմք աստանօր յայտնել:

Դիւանդ կը պահանջէր նոյնպէս

Դիւանդ կը պահանջէր նոյնպէս

Յանձնաժողովէս իւր բրած քննութեանցը մի մանրամասն տեղեկագիրն, այլ մի այդպիսի տեղեկագիրն իմ բազրութիւն աւելորդ համարեցինք նկատելով որ արդէն 'ի պահանջել հարկին պատրաստ եմք յ'Անտանի Ընդհ. Ժողովոյ ընդարձակ բացատրութիւններ տալ այն Մեծարոյ անդամոց որք պիտի փափաքին Գործադիր Ժողովոյն գործառնութեանց նկատմամբ որ եւ իցէ տեղեկութիւններ խնդրել Յանձնաժողովէս:

Հաշուեքննիչ Յանձնաժողով
Գր. Սիւսեան
Յ. Հանգոյեան
Բ. Յակոբեան

27 Մարտ 1895
Վառնա

Յ. Գ.

Ներքին Հաշուեկշռէն գատ կը վերադարձնեմք նաեւ:

Ա. — Մի հաշուեցոյց Սիւսեան ընկերութեան Վառնայի պատրաստեալ Գործադիր Ժողովոյ կողմանէ:

Բ. — Մի տեղեկագիր Գործ. Ժողովոյ:

Գ. — Մի ցանկ բաժանորդագրած:

Դ. — Մի ցանկ պաշտօնէից Սիւսեան ընկերութեան Գործ. Ժողովոյ:

Ե. — Մի կանոնադրութիւն Սիւսեան ընկերութեան:

Ընկերութեան պատկանեալ տնտեսական թուով 6 'ի մի, և բաժանորդներու տոմսակաց բուները 40 կտոր յ'երկուս ծրարեալ, կնքուած գտանն 'ի սենեկի Գործ. Ժողովոյ:

Նոյնի

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Պ. Խ. Յիւրիս. — Ձեր «Շարժում»-ի համար զրկուած գրամները ստացուած են ժամանակին: Տրբուքնա. — Տ. Ս. Գ. ստացուած է Ձեր զրկած 15 լէվը: Նիւ-Սորք. — Ընկեր Պ. Ձեզի երեք ամսէ ի վեր պատւիրեալ նամակ մը զրկուած է. Ձեր խոստումը գեռ չը կատարուեցաւ, և նամակին ալ պատասխան չառինք: Կը խնդրենք շտապիք:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանական իրատէով մը գերմանական ընկերութեան մը արտօնված է ընդ ծովեայ հեռագրական գծով Պրիւր միացնել Բոնստանցայի հետ: Գերմանացիք կը յուսան թէ Եւրոպայի Պուսոյ հետ հեռագրական յարաբերութիւնը այդ գծէն կատարուի: Սեւանիքի մէջ 400 հոգիի չափ քիւրտ բէտիֆներ խանութները թալանի տուեր են, իբրցոյց մը ընկելով որ զիրենք արձակեն:

Իսկիւպի նահանգին մէջ պուլկար հրոսախումբ մը Ծը սերպ սպաններ է:

— «Յայթ» թերթը կիմանայ թէ նաչովիչը մեծ վէզիրին յայ-

տարարած է որ Մակեդոնիոյ մէջ անկարելի է բարեկարգութիւններ մտնել առանց Պուլկարիոյ մասնակցութեան, ու խորհուրդ տուեր է որ թուրքերն զործարկէ իւր քաղաքային վարակած համաձայնութիւնը և հրաժարի օտար սպաններու խնդրաւելցնելու տրամադրութենէն, որովհետեւ Եւստրիա և Ռուսիա այդ ձեւով կը պատրաստեն Մակեդոնիոյ գրաւումը և ատով թուրքիոյ շահերը կը տուեն:

ՌՈՒՍԻԱ

«Մի. Յայթուեկ» թերթին Բեթերսպուրկէն կը հեռագրեն Բարթիկեան նաւատորմի գին նաւերը նորէն փութուած են: Կրկարժուի թէ նաւատորմը չուզելով երթալ կուսի դաշտ աւազ են լեցուցեր մաքրնաներուն մէջ, և այդ պատճառով նաւատորմի շի կրնար մեկնիլ:

— Օտէսայէն Վիէննա կը հեռագրեն թէ բոլոր դպրոցներուն աշակերտներուն կող եզր է չայ, շաքար, սպտիկ և ծխախոտ տանիլ Մայրաքոյն Երեւելք գացող զինուորներուն:

Բեթերսպուրկէն սեպտ. 7ին կը հեռագրեն թէ վերջնապէս որոշուած է մասնաւոր զինուորական տետանի մը առջեւ հանել ժէնէրալ Օրլովը, որ միայն թեթեւ վերաւորուած ըլլալով Եանթայի քովը նահանջեր է և այդպէսով ոչնչացուցեր է Քուրօթթի կինի Քուրօթին վերջնապէս չախլախելու ծրագիրը:

— Լոնտոնէն կը հեռագրեն թէ Լէննա նաւին նաւատորմը և ըսպանները մինչեւ պատերազմին վերջը պիտի ապրին Սան Փրանչեսկոյի մէջ:

Ի Տ Ա Լ Ի Ա

Սեպտեմբեր ութին Հոռոմէն կը հեռագրեն թէ նոյն առաւտը բացուեր է ազատամիտներու համագումարը, որուն մասնակցած են 4000 հոգի ամբողջ Եւրոպայէն:

ԿՐԵՏԷԻ ԽՆԴԻՐԸ

«Տէյլը թելեկ» թերթը Բեթերսպուրկէն կիմանայ, ստոյգ աղբիւրէ, թէ Գեորգ իշխանին կրետէն Յունաստանին միացնելու ջանքերը բոլորովին անյաջող եղած են: Առայժմ եւրոպական պատմութիւնները Երեւելքի մէջ ունէ փոփոխութիւն չեն քաջալերեր: Նիւթ Սուլթանը իրագործէ Մակեդոնիոյ մէջ բարենորոգումները և ջանայ Հայաստանի մէջ կարգը վերահաստատել, անորմէ ուրիշ զոհ չեն պահանջեր:

ՌՈՒՍ—ՃՈՐՈՆԱԿԱՆ Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ

Սեպտ. 8ին «Միս» լրագրի կը հաղորդեն թէ ճարձակահան 3 զօրաբանակներ յառաջ կը խապան զէպի Մուկաէն 300 թնդանօթներով:

Ճարձակահան զօրքերը կապանան թելիչը շրջապատել: Քուրօթին յաջողած է 100 հազար զօրքով անցնել խօնխօ:

— Վուրօթթին հեռագրած է թէ ճարձակահանները սեպտեմբեր 7ին յարձակած են ուսական դիրքերուն վրայ թուրքի կիրճին քով ուսական քանակի ձախ թելը շրջապատելու նպատակով:

Յարձակումը ետ մղուած է և սուս հեծեալազօրքը կրցած է ետ մղալ ճարձակահանները:

— «Միս» թերթի գործակալութիւնը կը հեռագրէ թէ սեպտ. 6ին ճարձակահանները կրկին ուսական ձախում գործած են Քուրթ-Սիւթուրին վրայ: Ճարձակահանները ուսական նաւահանգստին հիւսիսարեւելեան ամբողջութիւնները գերաւել: Հետեւանք դեռ յայտնի չէ:

— Բորթ Սիւթուրի մէջ արգէն շատ ցուրտ է զինուորները սկսած են սառիլ:

— Կը վստահեցնեն թէ Քուրօթթին ետ է առած է Մուկաէնը պարպելու հրամանը:

— Լոնտոնէն սեպտեմբեր 7ին կը հեռագրեն թէ կիրակի օրուան Եանթայի մօտ անդի ունեցած ճակատամարտի մասին պաշտօնական տեղեկութիւններ չը կան: Կը կարծուի թէ ուսները մեծ կորուստներ ունեցեր են:

— Ճարձակահանները կը յառաջանան զէպի Մուկաէն թուով մօտ 300,000 են, և ունին 850 թընդանօթ: Բայց Քուրօթթին ալ մեծ օգնութիւն ստացած է: Ռուս բանակին մէջ լրջութեամբ կը խօսուի յարձակում սկսել: Ռուսները որոշած են Մուկաէնը չյանձնել ճարձակահաններուն, Մեծ ճակատամարտը կապուի: Ճարձակահանները Լեառեանկի մէջ միայն վաշտ մը զօրք թողուցած են:

— Սեպտեմբեր 7ին Բեթերսպուրկէն կը հեռագրեն թէ ճարձակահան զօրքերու մաս մը Երեւելք է խափոնկի քով: Կէնչանէն 60 վերտ հեռու գէպի հիւսիս ու ընդհարում ունեցեր է խաղախներու գնտի մը հետ: Հօտեւանք յայտնի չէ:

— «Տէյլը թելեկ» թերթի թղթակիցը Բեթերսպուրկէն կը հաղորդէ հետեւեալը:

«Անձ մը, որուն անունը ամբողջ աշխարհը իրար պիտի անցունէր և թէ իմացուէր, իրեն յայտներ է թէ պատերազմը կարող է կարծուածէն աւելի շուտ վերջանալ:

Միջոցառումներ անկարելի է բաց օրէ օր կատարուող ճարձակահանները թէ Երկու պետութիւններն ալ մեծ փութանք պիտի ունենան, առանց ունէ օգուտ մը ունենալու: Ապահովուելու Ռուսիան պիտի յղթէ, սակայն իզուր տեղը ուսական պիտի ըլլայ: Ռուսները կրնան կուսի դաշտ զրկել միլիտար զօրք, եռապատկել նաւատորմը և ճարձակահան հաշտութիւն խնդրել: սակայն ատոր համար մասնակ պէտք է և 18 ամիսը թաւեր: Աւելի աղէկ է փոխանակ ճարձակահան անկեղծ հաշտութիւն մը կնքել որուն պիտի հետեւի յարձակողական և պաշտպանողական դաշնակցութիւն մը երկու պետութեանց միջեւ:

— Լոնտոնէն կը հեռագրեն թէ Բորթ Սիւթուրի հրամանատար Յիմսել զագրեցուցած է «Միս» կրայ» թերթը: Երկու գերմանացի ժամանակահատիկները հասնելով կը հաղորդեն թէ ճարձակահանները ամբողջութիւն գրաւեր են Ալպանիի ծոցը:

— Անգլիական մամուլին վերջերս ճարձակահանները հանդէպ բանած ցուրտ դիրքը ճարձակահաններու վրայ շատ գէշ կաղէ:

— Քանի օրէ ի վեր Սիւթուրի կան երկաթուղիով զօրք չի երթար գէպի Մուկաէն:

— Քանի մը սուս զօրագնդերու Մայրաքոյն Երեւելք մեկնումը տեղի ունեցած չէ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԻՆ

Կարծեմ 1886 թւին, Պոլսոյ «Հայրենիք» թերթը սի քանի տմիս իրելու օրաթերթ հրատարակուեցաւ Մարկոս Աղաբէկեանցի խմբագրութեամբ: այդ ժամանակ Պոլսոյ հաստատուելու վրայ գրած մէկ վէպ» Կ. Փաշանեան ստորագրութեամբ եւ Միլիեւ Բիլիլին վերտառութեամբ տպուած է անոր մէջ, գրաւելով չորս թերթերու բանասիրական բաժինը: Արդ, «վ որ այդ թիւերը գտնելով ինձ զրկէ, անոր կը նուիրեմ մէկ տարեկան «Շարժում» եւ կանխօրէն շնորհակալութիւնս:

Տօք. Կ. Փաշայեան
Հասցէս՝
Տր. Բաշայեան, Ալեքսանտրի (Եգիպտոս)

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна